ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է «ԱՏՈՄԱՅԻՆ ՆՈՐ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ՓԲԸ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 2024թ. օգոստոսի 1-ի «Հայաստանի Հանրապետությունում նոր ատոմային էներգաբլոկի (էներգաբլոկների) կառուցման ծրագրի կառավարման նպատակով «Ատոմային նոր էներգաբլոկի կառուցում» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» №1198-Ն որոշման համաձայն նախատեսվում է ստեղծել «Ատոմային նոր էներգաբլոկի կառուցում» ՓԲԸ (այսուհետ՝ ընկերություն):

Ընկերության գործադիր մարմնի ձևավորման գործընթացն իրականացնելու նպատակով հայտարարվում է Ընկերությունում համապատասխան մասնագետների ներգրավում:

Նախատեսվում է ձևավորել ընկերության գործադիր մարմին, ինչպես նաև Ընկերության կանոնադրությամբ սահմանված գործառույթների իրականացում:

Ընկերության գործառույթները միտված են լինելու Հայաստանում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման հետ կապված համապատասխան կադրերով համալրմանը և վերջիններիս կարողությունների զարգացմանը, որպեսզի մասնագիտական եզրակացություն ներկայացվի ՀՀ կառավարությանը նոր միջուկային էներգաբլոկի կառուցման տեխնոլոգիայի ընտրության վերաբերյալ:

Համապատասխան մասնագետների ներգրավման համար պահանջվում է՝

- Էներգետիկայի կամ իրավագիտության բնագավառի բարձրագույն կրթություն,
- իրավագիտության կամ էներգետիկայի բնագավառում՝ առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ,
- ատոմային էներգետիկայի սարքավորումների, համակարգերի և կառուցվածքների շահագործման գիտելիքներ,
- ռուսերենի ազատ տիրապետում և անգլերենի կամ ֆրանսերենի իմացություն,
- իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն:

Մասնագետների ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

- համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- աշխատանքը ճիշտ պլանավորելու, խնդիրներին օպերատիվ լուծում տալու անհրաժեշտ հմտություն.
- անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

«Ատոմային նոր էներգաբլոկի կառուցում» ՓԲԸ ստեղծելու նպատակով համապատասխան մասնագետների ներգրավման համար հարցազրույցը կանցկացվի **2026 թվականի փետրվարի 6-ին, ժամը 11:00**, Նախարարության շենքում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, 6-րդ հարկ՝ դահլիճ):

Ներգրավմանը մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ Նախարարություն (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, 6-րդ հարկ) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (լրացվում է տեղում).
2. մեկ լուսանկար 3X4 չափի.
3. քաղվածք աշխատանքային գրքույկից կամ աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ (հրաման, տեղեկանք).
4. ինքնակենսագրություն.
5. անձնագիր և/ կամ նույնականացման քարտ՝ պատճեններով (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք),
6. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ,
7. արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական.
8. կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված).
9. բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել).

Քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Քաղաքացին ներկայացվող բնօրինակ փաստաթղթերի հետ ներկայացնում է նաև դրանց պատճենները, որոնք պատճենների հետ համեմատվելուց հետո վերադարձվում են քաղաքացուն:

Ներգրավմանը մասնակցելու համար դիմումներն ընդունվում են աշխատանքային օրերին՝ 2025 թվականի դեկտեմբերի 26-ից մինչև 2026 թվականի հունվարի 26-ը ներառյալ՝ ժամը 9.30-ից 13.00-ը:

Ներգրավմանը մասնակցել ցանկացող քաղաքացիները հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, հեռախոսահամարներ՝ 010-511-355, 010-511-316, էլեկտրոնային փոստի հասցե՝ n.kirakosyan@mta.gov.am):